# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 70-Ա

### ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և 41-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաշվի առնելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ի առավոտյան Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունները, /Ռազմական դրություն, մասնակի զորահավաք/, համայնքի բնակչության շրջանում խուճապային իրավիճակ չստեղծելու, ՀՀՊՆ.Զ և Զորահավաքային Համալրման Ծառայության կողմից Լեռնանիստ համայնք ուղարկված ցուցակները հավաքագրելու, համայնքի բնակչության և զինծառայողների ընտանիքների հետ բացատրական աշխատանքները կատարելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով

խմբի ղեկավար Իսահակ Մելքոնյան /համայնքի ավագանի/
խմբի ղեկավարի տեղակալ՝ Ռոման Մանուկյան /համայնքի ավագանի /
խմբի անդամներ՝ Սուսաննա Հովհաննիսյան /Լեռնանիստի միջն դպրոցի ուսուցչուհի/
Աննա Վարդանյան / Լեռնանիստի միջն դպրոցի ուսուցչուհի
Սոֆյա Աբրահամյան / Լեռնանիստի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ/
Լուսիկ Հակոբյան /Լեռնանիստի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ
Մարինե Ալեքսանյան /Լեռնանիստի մանկապարտեզի տնօրեն/
Գոհար Ասատրյան /Լեռնանիստի ԲՄ տնօրեն/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 28
գ.Լեռնանիստ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 71-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5 -ի N 54-Ն որոշումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 54 Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝
1) 02.05.1.51 / պաշտպանություն/ ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի ծառայություն/ հոդվածի <<150.0>> թիվը փոխարինել <<75,0>> թվով:
2) 02.5.1.51/ պաշտպանություն/ ծրագրի 4264 / տրանսպորտային նյութեր/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<75,0>> թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. սեպտեմբերի 28
գ.Լեռնանիստ